

ՏՈՒՇԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՊԻՊՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ/ԷԿՈԿԵՆՏՐՈՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ և ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՄԲԻՈՆ



Ա.թ. մայիսի 17-ին Տուշայի համալսարանում (Վիտերբո, Իտալիա) տեղեկատվական օր էր՝ նվիրված Հայաստանի և Վրաստանի համալսարանների հետ հաջողված համագործակցության պատմությանը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի դասախոս, միջազգայնացման պատասխանատու Դավիթ Պիպոյանը ներկայացրեց էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում ԳԿՄԿ-ի և Տուշայի համալսարանի միջև հաջողված համագործակցության պատմությունը: Ծրագրի շնորհիվ Տուշայի համալսարանում ուսում են ստացել 4 ասպիրանտ և 3 մագիստրանտ, իսկ ներկա պահին բնապահպանություն և գործարար վարչարարություն մասնագիտություններով ուսանում են երկու ասպիրանտ և 6 մագիստրանտ: Դավիթ Պիպոյանը ներկայացրեց ասպիրանտների և մագիստրանտների փոխանակման ծրագրի արդյունքները, որոնք հնարավորություն ընձեռեցին ուսանողներին իրենց ղեկավարների հետ համատեղ հոդվածներ ունենալու միջազգային գրախոսվող ամսագրերում, զեկույցներով ներկայանալու հեղինակավոր միջազգային գիտաժողովներին, ստանալու բարձրորակ կրթություն և իրականացնելու բարձրակարգ հետազոտություններ:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվիրակությունը ա.թ. մայիսի 20-ին այցելեց Տուշայի համալսարանի մի շարք ղեկավարամենտներ և լաբորատորիաներ, մասնավորապես՝

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ. այս դեպարտամենտը եզակի է նրանով, որ Լացիոյի տարածաշրջանի միակ դեպարտամենտն է, որն իրավասու է դասավանդելու և հետազոտություններ կատարելու գյուղատնտեսական, անտառաբուծական, բնապահպանական գիտությունների և ագրոկենսատեխնոլոգիայի ոլորտներում: Ուսուցումը սերտ կապված է հետազոտության հետ, և այս կապը ավելի է սերտանում, երբ եռամյա բակալավրիական ծրագիրը խորանում է մագիստրոսական ծրագրում, իսկ ասպիրանտական ծրագրի հետազոտական աշխատանքներ կատարելիս՝ հասնում առավելագույն մակարդակի:

ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ. դեպարտամենտը կենսաբանության և բնապահպանության ոլորտներում պատրաստում է հմուտ տեխնիկներ և ոլորտի մասնագետներ: Այստեղի շրջանավարտները կարող են արտադրողական և տեխնոլոգիական գործունեություն ծավալել զանազան պրակտիկ ոլորտներում, ի հավելումն դրան՝ բազմաթիվ վերլուծական ծառայություններ իրականացնել: Էկոլոգիայի և կենսաբանության դեպարտամենտն ունի բազմաթիվ լաբորատորիներ, որտեղ ուսանողներն աշխատում են իրենց ավարտական թեզերի և ասպիրանտական ավարտական ատենախոսությունների ուղղությամբ: Դեպարտամենտը համալրված է արդի սարքավորումներով և վերահսկվում է դասախոսական կազմի, ինչպես նաև ազգային և միջազգային ճանաչում ունեցող հետազոտողների կողմից, որոնց աշխատանքները հրապարակվում են միջազգային առաջատար ամսագրերում:

Մայիսի 21-ին Իտալիայի Տուշայի համալսարանը ոլորտային դասախոսների հետ կազմակերպել էր հանդիպում-քննարկումներ, որոնց շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դասախոսները անհատական հանդիպումներ ունեցան համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ:

Դավիթ Պիպոյանը մասնակցեց պրոֆեսորներ Սավերիո Սեննի և Գաբրիելե Դոնոյի հետ կազմակերպած հանդիպումներին: Պրոֆեսոր Սավերիո Սեննի

անցկացրած հանդիպում-քննարկումը վերաբերում էր սոցիալական գյուղատնտեսության առավելություններին ու զարգացման խոչընդոտներին, օրգանիկ, ինչպես նաև սոցիալական գյուղատնտեսությունների զարգացմանը՝ ոչ միայն եկամուտների ավելացման, այլև հանրային առողջապահական նպատակներով:

Պրոֆեսոր Գաբրիելե Դոնոյի հետ հանդիպմանը ներկայացվեցին Իտալիայի գյուղատնտեսական արտադրության հիմնական ուղղությունները, գյուղատնտեսության ոլորտի իրավական կարգավորումն ու ֆինանսավորման աղբյուրները: Հանդիպման հիմնական թեման ագրոպարենային քաղաքականության մարտավարությունն էր, ինչպես նաև պարենային անվտանգության մարտահրավերները: Գաբրիելե Դոնոյի մասնագիտական հետաքրքրության ուղղություններից են ոչ միայն բիոէկոնոմիկան և շրջանակային տնտեսությունը, այլև կլիմայի փոփոխությունների պարագայում ագրոպարենային համակարգերի կայունության ապահովումը: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց պրոֆեսորի հետ կազմակերպել առանձին աշխատանքային քննարկում՝ հետագա համագործակցության և համատեղ գիտական աշխատանքների իրականացման մասով: Պրոֆեսոր Դոնոյի մոտ են ուսանում ԳԿՄԿ մագիստրանտներ Ստելլա և Սեդա Ստեփանյանները, որոնք արդեն գերազանցությամբ հանձնել են քննությունը:

Մայիսի 21-ին կազմակերպված այցերի շրջանակում հատկանշական էր այցելությունը համալսարանի հետազոտական-փորձարարական կենտրոն: Այցելության ընթացքում ներկայացվեց ուսումնափորձնական տնտեսության դերը գիտակրթական պրոցեսում, ներկայացվեցին ինչպես փորձարարական ջերմատունը, այնպես էլ բուսաբուծական մթերքների և կենդանիների բուժման փորձարարական բլոկները: Հատկանշանական էր աշխատանքների կազմակերպման ձևը. թե՛ կենտրոնական լաբորատորիան, թե՛ ուսումնափորձնական տնտեսությունը համարվում են առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ, սակայն

յուրաքանչյուրն ունի գիտակրթական հատվածներից պատասխանատուներ, այսպիսով՝ կրթություն-գիտություն-արտադրական կապն ամբողջությամբ սպասարկում են այս երկու կարևորագույն կառուցվածքային ստորաբաժանումները:

Տուշայի համալսարանում Դավիթ Պիպոյանը ծանոթացավ նաև դեպարտամենտների գնահատման չափորոշիչներին: Շատ կարևոր է տարբեր երկրների համանման փորձին ծանոթանալը, քանի որ ՀՀ-ում ևս պետք է իրականացվի բուհերի գործունեության արդյունավետության գնահատում: Տուշայի համալսարանում միայն ագրարային բլոկի ագրոպարենային համակարգերի ինովացիաների ամբիոնն է ստացել «Գերազանցության դեպարտամենտ» աստիճան, այս հարցում կարևոր նշանակություն են ունեցել առաջատար գիտական ամսագրերում տպագրությունների քանակը, ինչպես նաև փորձարարական մասի ապահովման ենթակառուցվածքների առկայությունը:

Մայիսի 24-ին Իտալիայի Տուշայի համալսարանի մոլեկուլային սնուցման լաբորատորիայի վարիչ պրոֆեսոր Նիկոլո Մերենդինոյի մոտ կազմակերպված էր աշխատանքային հանդիպում, որի նպատակն էր քննարկել ինչպես Էրասմուս Պրոյուս ծրագրի շրջանակում կատարված աշխատանքների արդյունքները, այնպես էլ քննարկել նոր համագործակցության ոլորտները: Ելույթով հանդես եկավ ԳԿՄԿ դասախոս, սննդագիտության դոկտոր Դավիթ Պիպոյանը, ներկայացրեց, որ համագործակցության շրջանակում իրականացվել են շատ կարևոր հետազոտական աշխատանքներ, որի արդյունքում տպագրվել է չորս համատեղ աշխատանք՝ բարձր ազդեցության գործակցով ամսագրերում: Տուշայի համալսարանի սննդագիտության լաբորատորիան մի քանի տարի է օժանդակում է ՀՀ ԳԱԱ Էկոկենտրոնի Սննդի ոլիսկերի գնահատման կենտրոնին՝ հայկական մթերքների հակաօքսիդանտային հատկանիշների ուսումնասիրման լաբորատոր անալիզների մասով: Նշվեց, որ ֆունկցիոնալ սննդի արտադրության ոլորտը ամբողջ աշխարհում զարգանում է շատ արագ տեմպով, սակայն կարևոր նախապայմաններից է ապացուցողական սննդագիտության ճշգրիտ մեթոդների կիրառությունը հետազոտությունների

իրականացման ժամանակ: Ներկայումս ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի երկու մագիստրոսները՝ Սեդա և Ստելլա Ստեփանյանը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Էկոլոգիայի ասպիրանտ Քրիստինա Յարմալոյանն իրենց հետազոտական աշխատանքների մի մասն իրականացնում են պրոֆեսոր Մերենդինոյի ղեկավարված լաբորատորիայում և պայմանավորվածություն է ձեռքբերվել նաև հոդվածների աշխատանքներում ներգրավվել մագիստրոսներին և ասպիրանտներին, ինչը կնպաստի բարձր որակավորում ունեցող երիտասարդ մասնագետների պատրաստմանը:

Դավիթ Պիպոյան , սննդագիտության դոկտոր



29.05.2019թ.